# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ու Մ

***«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին***

«27» հունիսի 2024թ. թիվ 9

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի և 2-րդ մասի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը և «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024թ. հունիսի 17-ի թիվ 4 արձանագրության 1.3.2-րդ կետը՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Պիպաս Ֆուդ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «Պիպաս Ֆուդ» ՍՊԸ | 03531121 | ք.Աբովյան 3-րդ մ/շ 12/27 | «Պիպաս Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 23-րդ չափաբաժնի մասով գնահատվել է անբավարար և մերժվել՝ ղեկավարվելով ՀՀ | - | - | «27» հունիսի 2024թ. թիվ 9 որոշում « ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով" մասնավորապես՝ հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման նպատակով «Պիպաս Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթուղթը կազմված չի եղել հրավերով սահմանված պայմաններին համապատասխան: | | | |

*Սույն որոշման հիմքում առկա («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող) բոլոր փաստաթղթերը հրապարակված են **www.procurement.am** հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում:*

3. Պատասխանատու ստորաբաժանմանը՝ ապահովել սույն որոշման տրամադրումը ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ կայացման հաջորդող օրը:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ն. ԳԱԼՍՏՅԱՆ**